

ԴԱԿԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԼՐԱԳՐՈՂԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՍՑԵԱՏԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԻԱՏԵՔՍՏԵՐՈՒՄ***

*Բանալի բառեր*¹ մեդիատեքստ, լրագրող հեղինակ, արտաքին հասցեատեր, ներքին հասցեատեր, դերային պահվածքներ, իրական կերպար, երկխոսային հարաբերություններ, ներքին երկխոսություն, արտագաղթ:

Մուտք

Մեդիադաշտում ընթացող ակտիվ զարգացումները լուրջ վերլուծությունների, քննարկումների ու մեկնաբանությունների հնարավորություններ են ընձեռել մերօրյա հետազոտողներին: Այս համատեքստում թերևս առաջնային խնդիր է լրագրող-մեդիատեքստ-հասցեատեր փոխառնչությունների ուսումնասիրությունը: Սրանց հանդեպ հետաքրքրությունը զգալիորեն մեծացել է ոչ միայն լրագրագետների, այլև լեզվաբանների, նշանագետների, բանասերների, ոճագետների և մի շարք այլ գիտակարգերի ներկայացուցիչների շրջանում: Հոդվածի նպատակն այս եռյակի բաղկացուցիչ տարրերի փոխկապակցվածության և մեդիատեքստում հեղինակի ու ներքին հասցեատիրոջ երկխոսության որոշ կողմերի վերհանումն է:

1. Եռյակի բաղադրիչները

Ա) Լրագրող հեղինակը

Լրագրողի կամ ըստ տեքստաբանության մեջ առավել հաճախ կիրառվող հասկացության՝ հեղինակի ներկայությունը, նրա դերային գործառնությունները տեսաբանները անուշադրության չեն մատնել: Այս առումով թերևս հետաքրքիր է ընդհանուր գծերով անդրադառնալ գրականությունը և ժուռնալիստիկան ներկայացնող գրող և լրագրող հեղինակների համեմատական բնութագրմանը:

Գրողը, «մարմին ու հոգի հաղորդելով» իր տեքստին, աստիճանաբար օտարվում է նրանից՝ հնարավորություն ընձեռելով, որ

*Հոդվածն ընդունվել է 15.12.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Բ.Գ.Դ., պրոֆեսոր Հովիկ Մուսայելյանը:

տեքստը, գեղարվեստորեն կերպավորված հերոսները շարունակեն ապրել ինքնուրույն կյանքով: Այլ խոսքով՝ հեղինակը, ըստ Մ. Բախտինի, պետք է կանգ առնի իր ստեղծած գեղարվեստական աշխարհի սահմանագծին, քանի որ «ներխուժումը այդ աշխարհ՝ քանդում է վերջինիս գեղագիտական կայունությունը»:

Այլ են լրագրող հեղինակի մոտեցումները: Տեքստում նա ռեալ գոյություն ունեցող անձ է, ներկայացնում է իրական կյանքի կոնկրետ իրավիճակներ, «մասնագիտական, հաճախ նաև իրավաբանական պատասխանատվություն է կրում նյութի ճշգրտության և օբյեկտիվության համար»***, տալիս է իր գնահատականը այս կամ այն երևույթին և այլն: Լրագրողի ներկայությունը ժուռնալիստական տարբեր ժանրերում դրսևորվում է ոչ միանշանակորեն. այն համեմատաբար ակտիվ է վերլուծական, հրապարակախոսական և առավել կրավորական՝ տեղեկատվական նյութերում:

Բ) Մեդիատեքստը

Եռյակի հաջորդ բաղադրիչը՝ մեդիատեքստ, իբրև եզրույթ սկսել է կիրառվել անցյալ դարի 90-ական թվականներին՝ ներառելով մինչ այդ եղած եզրույթները՝ լրագրողական տեքստ, հրապարակախոսական տեքստ, թերթային տեքստ, հեռուստա և ռադիոտեքստ, գովազդային տեքստ, մեր օրերում նաև՝ համացանցային տեքստ և այլն: Մեդիատեքստին տրվող սահմանումներն այժմ քիչ չեն նաև արդի հետազոտողների աշխատություններում, որոնցից, մեր կարծիքով, առավել ընդհանրական բնույթ ունի հետևյալ ձևակերպումը. մեդիատեքստը շարժուն «միավոր է, որի միջոցով խոսքային շփումներ են իրականացվում զանգվածային հաղորդակցության ոլորտում»:

Որոշ տեսաբանների կարծիքով՝ մեդիատեքստը ոչ միայն լեզվական, այլև համամշակութային երևույթ է, քանի որ մարդկային գործունեության հոգևոր ազդակների և նյութական ոլորտի մասին տեղեկատվություն ստանալու աղբյուր է և բնութագրվում է իր բազմաչափությամբ, ինչը ենթադրում է վերբալ /բառային/, վիզուալ /տեսողական/, աուդիտիվ /լսողական/, աուդիովիզուալ /տեսալսողական/ և այլ բաղադրիչների համադրություն տեքստի միասնական տարածության մեջ:

Գ) Հասցեատերը

Մեդիատեքստի տիպաբանական չափորոշիչների մասին խոսելիս առանձնակի կարևորություն է տրվում հասցեատիրոջ ներկայությանը: Վերջինիս հավաքական ամբողջությունը լսարանն է, որի և լրագրողի փոխհարաբերությունները բազմաշերտ են, բազմապլան և բազմաչափ: Տասնամյակներ առաջ (մասնավորապես՝

խորհրդային տարիներին) հասցեատիրոջ կամ լսարանի կրավորական կեցվածքի մասին ձևավորված կարծրատիպին մեր օրերում փոխարինել է հեղինակին համաքայլ ընթացողը, ով նրան մղում է համարժեք գործողությունների: Բնութագրումներից մեկում նա համարվում է «հայելի, որի մեջ արտացոլվում է հեղինակը» (Գ.Սոլգանիկ):

Նրանց փոխառնչությունները դիտվում են նաև որպես համագործակցային հաղորդակցություն, որը տեղափոխվում է երկխոսության դաշտ. մոտեցումն առավելապես համահունչ է սոկրատյան սկզբունքներին. «Երրորդ նպատակը, որ կարող է հետապնդել հաղորդագրություն ուղարկողը, միավորելն է իրեն և հասցեատիրոջը իրենց հետաքրքրող հարցին հավասարապես պատասխան փնտրողների միության մեջ: Սա կողմնորոշում է դեպի երկխոսություն, հաղորդակցության երկխոսային մոդել (հարացույց), որն առավել հստակորեն կիրառել է Սոկրատեսը: Նման հաղորդակցության նպատակը համագործակցությունն է»:

Սովորաբար հետազոտողները հեղինակ-հասցեատեր փոխհարաբերություններում նկատի են ունենում արտաքին հասցեատիրոջը: Արտաքին հասցեատերը ընթերցողն է՝ հեղինակից և նրա տեքստից դուրս, ով իր ակտիվ գործունեությամբ, հատկապես ինտերնետ կայքերում առկա հրապարակումների հանդեպ անմիջական արձագանքներով երկխոսային, ինտերակտիվ կապերի մեջ է հեղինակի հետ: Փոխառնչությունների այս մակարդակը, ինչ խոսք, նույնպես հետաքրքիր է և լուրջ քննության կարիք ունի: Մենք, այնուհանդերձ, կանգ կառնենք հեղինակի (լրագրողի) և ներքին հասցեատիրոջ փոխհարաբերությունների վրա՝ իրողություն, որ մինչ այժմ դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից:

Փորձենք ներկայացնել, թե ինչպես է հեղինակը ներքին երկխոսությամբ թատերայնացնում մեդիատեքստի միջավայրը, ներմուծում այնտեղ ներքին հասցեատիրոջ դերային մի քանի պահվածքներ՝ հարցասեր, ընդդիմադիր, համախոհ և այլն, որոնք նա խաղարկում է իր կազմակերպած խաղընթացի (սցենար) սահմաններում:

2. Հեղինակը և նրա այլաձևությունները մեդիատեքստում

Ինչպես նշեցինք, գեղարվեստական տեքստում հերոսներն աստիճանաբար հեռանում են հեղինակից և ապրում իրենց ինքնուրույն կյանքով: Մեդիատեքստերում թեև լրագրող հեղինակի օտարում ըստ էության չի կատարվում, բայց և այնպես նրա ստեղծագործական ես-ը ներքնապես տրոհվում է: Այս տրոհումը առաջ է բերում հնարավոր գրուցակիցների խումբ, որոնք, նախապես լինե-

լով լրագրողի մտքում ու գաղափարներում, այնուհետև տեղափոխվում են տեքստային միջավայր: Հնարավոր գրուցակիցները հեղինակից արտածված ներքին հասցեատերերն են: Այլ խոսքով՝ հեղինակը, մինչև արտաքին հասցեատիրոջ հետ երկխոսության մեջ մտնելը, սեփական խաղընթացի կանոններով ստեղծում է ներքին երկխոսային հարաբերություններ, որտեղ մի կողմում ինքն է, մյուսում՝ իր մեկ այլ դիմակով՝ ներքին հասցեատերը:

Նյութը շարադրելիս լրագրողը նախապատրաստվում է դրան, և ներքին հասցեատերը նրա մեջ սկսում է ուրվագծվել հենց այս փուլում: Փաստերի, իրադարձությունների նկարագրության, ինչպես նաև սեփական խոհերի, դատողությունների հոսքում այդ հասցեատերը «հայտնվում է» ժամանակ առ ժամանակ և «հիշեցնում» իր մասին: Նյութի շարադրանքը ինքնանպատակ չէ. ընթանում է հեղինակի ներքին երկվության և հոգեբանական այլ խնդիրների առկայության պայմաններում: Այս իրավիճակներում ներքին հասցեատիրոջ ներկայությունը դառնում է անհրաժեշտություն, քանի որ հնարավորություն է տալիս հեղինակին երկխոսությամբ հաղթահարելու հոգեբանական երկվությունը և ավելի պարզ ու հասկանալի դարձնելու սեփական դատողությունների ընթացքը:

Այդ երկխոսությունը կարող է ընթանալ հեղինակին հարցեր տալով, հակադրվելով կամ համաձայնելով նրա հետ: Ուստի մեկ անգամ ևս շեշտենք. ներքին հասցեատերը դառնում է տեքստի մեջ հեղինակի դիմակը (կամ դիմակները, եթե ներքին հասցեատեր-գրուցակիցները շատ են), որի ներկայությունը զգալիորեն մեծացնում է հեղինակի հնարավորությունները. մասնավորապես՝ կառուցակազմում է ներտեքստային միջավայրը, ամրացնում ներքին կառույցը և հնարավորինս կանխագծում այն հարցերի շրջանակը, որ հետագայում կարող է տալ արտաքին հասցեատերը:

Ըստ էության՝ ներքին հասցեատերը հեղինակի հոգեբանական այլացումն է՝ հարցասեր, ընդդիմադիր կամ համախոհ, որը, գրույթի տարածքում ուղեկցելով հեղինակին, օգնում է նրա դատողությունների ընթացքը հանգեցնելու տրամաբանական ավարտի: Մեկ այլ ձևակերպմամբ՝ ներքին հասցեատերը նաև արտաքին լսարանի ներքին մանրակերտն է, որի խաղարկումով տեքստը դառնում է հեղինակ-լրագրողի և հեղինակ-լսարանի յուրօրինակ հանդիպավայր և նախապատրաստում է հեղինակի հանդիպումը արտաքին լսարանի հետ:

Հեղինակ - ներքին հասցեատեր երկխոսության հաճախ կարելի է հանդիպել տարբեր ժանրերի նյութերում, իսկ առավել հաճախ՝

հրապարակախոսական, վերլուծական հոդվածներում: Ժանրային ընտրությունից բացի, որոշակի դեր են խաղում նաև հրապարակման թեմատիկ ուղղվածությունը (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային), հեղինակի աշխարհայացքային ըմբռնումները, ստեղծագործական նախասիրությունները, մատուցման լեզվաոճական նրբությունները և այլն:

3. Հեղինակ-ներքին հասցեատեր երկխոսությունը (Արտագաղթի օրինակով)

Հայ իրականության մեջ, ինչպես հետխորհրդային մյուս տարածքներում, բազմաթիվ են չլուծված հիմնախնդիրները: Այս համատեքստում ուշադրության կենտրոնում է մասնավորապես Հայաստանից շարունակվող արտագաղթը, որի մասին տարաբնույթ հրապարակումներ են տպագրվել վերջին տարիների էլեկտրոնային և տպագիր մամուլում: Արտագաղթի հասարակական լայն հնչեղությամբ է պայմանավորված թեմայի ընտրությունը, քանի որ հեղինակների ակտիվ կեցվածքը այդ հրապարակումներում հնարավորություն է ընձեռում ինքնաերկխոսության ուշագրավ շերտեր բացել-վեր հանելու մեթոդներին հասցեատիրոջ մի շարք գործառնություններ:

Հայ հեղինակները (լրագրողներ, մասնագետներ) արտագաղթը ներկայացնում են տարբեր դիտանկյուններից: Հրապարակումներն ընդգրկում են սոցիալ-քաղաքական և բարոյական ըմբռնումների լայն շրջանակ՝ հայրենաթողություն, բնակչության հուսահատ տրամադրություններ, իշխանությունների քննադատություն, սրանց գործունեությանը բնորոշ կոռուպցիայի աննախադեպ աճ, վստահության կորուստ և այլն:

Տպագիր և համացանցային մամուլում թեման մատուցող հրապարակումների բազմազանությունն ակնհայտ է: Եվ դա նկատելի է առաջին հերթին հեղինակ-ներքին հասցեատեր երկխոսության դրսևորումներում: Ներքին հասցեատերերը, ինչպես ասացինք, հեղինակի ես-ի տարատեսակներն են, նրա մտքերը ներքին երկխոսությամբ նախնական «փորձաքննության ենթարկող», բայց և նրանից չտարանջատված դիմակները: Արտագաղթին նվիրված հրապարակումներից շատերում հաճախ է կիրառվում նման հնարանքը: Վերջինիս ակտիվ տարատեսակներից մեկը ներքին հասցեատիրոջ «հնչեցրած» հարցերն են հեղինակին, որոնք հոդվածի հիմնական մտքերը առավել համոզիչ դարձնելու հնարավորություն են ընձեռում. «...Ի՞նչ օրինակ կարող են ծառայել այդ մարդկանց (արտագաղթողների-Դ. Պ.) ճակատագրերը եկող սերնդի համար:

Մի՞թե, այդ ամենը տեսնելով, մեզ համար չեն արժեզրկվում կրթությունը, գիտելիքը...», - գրում է yerkir.am-ի հեղինակը՝ ներքին հասցեատիրոջ անունից: «Ինչո՞ւ են մարդիկ լքում հայրենիքը» «Ինչո՞ւ մարդիկ իրենք իրենց հարց չեն տալիս, թե ինչու է սփյուռքը Հայաստանում միայն բարեգործություն կատարում, այլ ոչ՝ ներդրումներ», - նույնպիսի մտահոգություն է բարձրացվում 168.am-ի հրապարակումներից մեկում: Այս և նմանատիպ հարցերը հեղինակին հնարավորություն են տալիս մի պահ հեռանալու իրենից, պատասխան գտնելու այդ հարցերին և այնուհետև շարունակելու սեփական խոհերի ու մտորումների ընթացքը:

Ներքին հասցեատերը մեկ այլ տեղ ներկայանում է հակադրվողի դերակատարմամբ. «Կարող եք հակադրվել, ասել, թե Իսրայելն օգտվում է ծովից և այլ հնարավորություններից, որը Հայաստանը չունի»: Ե՛վ հակադրվող, և՛ հարցասեր հասցեատիրոջը հեղինակը երբեմն դիմում է երկրորդ դեմքով. «Մեր ընդունած օրենքով ու սահմանադրությամբ մեր այս երկրի տերը ժողովուրդն է, պետությունը նրա ծառան է... Եթե ծառադ վատն է, անշուշտ, մեղավոր է, որ այդպիսին է, բայց դու էլ ես մեղավոր, որ վատ ծառա ես պահում, ...երբ ծառայիդ փոխելու տեղը տուներ ես փոխում...»:

Հրապարակումներում ներքին հասցեատերը կարող է հանդես գալ նաև իբրև հեղինակին համախոհ: Այս դեպքում տարբերակման հիմնական հնարանքը «մենք»-ի տիրույթի կիրառումն է, երբ հեղինակը խոսում է հասարակությանը քաջածանոթ երևույթների, իրադարձությունների մասին կամ դատողություններ է անում հանրահայտ ճշմարտությունների հիմքի վրա: Ներքին հասցեատիրոջ այս տեսակը հեղինակի այն դիմակներից է, որի հետ համատեղ փորձ է արվում փոխընթերցման ընդհանուր եզրեր գտնել նաև արտաքին հասցեատիրոջ հետ. «Մենք բոլորս պետք է հիշենք, որ Հայաստանը բացառիկ երկիր է, որը ժառանգել է հնագույն հարուստ և վառ մշակույթ... մենք բոլորս պետք է շատ մեծ պատասխանատվություն զգանք այդ մշակույթի պահպանման և զարգացման համար՝ մեր սերունդների, ամբողջ աշխարհի առջև: Մենք պետք է պահպանենք մեր երկիրը, քանի որ առանց նրա՝ մենք դատապարտված ենք» (ընդգծումը մերն է-Դ. Պ.):

Տեքստում հեղինակը, իրենից և ներքին հասցեատերերից բացի, ստեղծում է նաև իրական կերպարներ: Սրանք կոնկրետ մարդիկ են, ովքեր իրենց վրա կրում են կյանքի դժվարություններն ու դառնությունները՝ հայրենիքից հեռացածներ, արտագաղթելու նախա-

պատրաստվողներ, այլ երկրներում աշխատանքի տեղավորվածներ և այլն. «Շատ տեղեր կան, որտեղ կարող ես առանց փաստաթղթի աշխատել (նկատի ունի Եվրոպան-Դ. Պ.), աման լվալ, տուն մաքրել և այլն, վատ էլ չեն վճարում՝ ամսական 1000 եվրո», -պատմում է ակնարկի՝ հայրենիքից հեռացած հերոսուհին: Քիչ հետո նա պատճառաբանում է. «Որովհետև փող կա, աշխատանք կա, հարգանքն էլ՝ վրադիր»:

Արտագաղթին նվիրված գիտավերլուծական տեքստերում իրական կերպարներից ոմանք նշանավոր գիտնականներ են, հոգեբաններ, արվեստագետներ, գրողներ: Նրանց խոսքը հեղինակը մեջբերում է՝ իր դիտարկումներն առավել ծանրակշիռ դարձնելու համար:

Հետաքրքիր է, որ իրական կերպարները նույնպես կարող են ունենալ իրենց ներքին հասցեատերերը. «Իսկ հիմա ինչո՞ւ է ժողովուրդն արտագաղթում, 90-ականներին դեռ բացատրություն կար. պատերազմի, տնտեսական ճգնաժամի տարիներ էին, իսկ հիմա՝ ինչո՞ւ», - «Առավտի» հրապարակումներից մեկում հարցնում է իրական կերպարը (քաղաքագետը)՝ ներքին հասցեատիրոջ դիմակով և ինքն էլ հակադարձելով՝ պատասխանում է:- Գիտե՞ք, աշխարհն առաջ է գնում, զարգանում է, ինչո՞ւ մենք պետք է մնանք, ասենք, 97-98 թվականի մակարդակի վրա»: Այլ խոսքով՝ հեղինակը ներքին հասցեատեր է ստեղծում ոչ միայն իր, այլև իրական կերպարի համար, այսինքն՝ տրոհում է նաև նրա եսը, երկխոսային դաշտ է մտցնում նրանից արտածված ներքին հասցեատիրոջը: Արդյունքում ունենում ենք տեքստ՝ հեղինակ-ներքին հասցեատեր, իրական կերպար-ներքին հասցեատեր բազմադեմ կառույցով, որի խաղարկման թելերը վերջին հաշվով՝ հեղինակի ձեռքում են:

Ներքին հասցեատիրոջ ներկայության ուշագրավ տարբերակներից մեկն էլ ի հայտ է գալիս հարցազրույցներում, որտեղ հեղինակային խոսքի հնարավորությունները սահմանափակվում են: Տպավորություն է ստեղծվում, թե ժանրային այս կառույցում հեղինակն ըստ էության հեղինակ չէ, այլ առավելապես՝ ներքին հասցեատեր, քանի որ տեքստի տարածքը հիմնականում հանձնում է զրուցակցին՝ իրեն վերապահելով միայն հարցեր տալու գործառույթը (ինչը մյուս դեպքերում բնորոշ է ներքին հասցեատիրոջը): Հարցազրույցի ավարտին նրան մնում է պարզապես գրի առնել զրուցակցի մտքերի, դատողությունների ընթացքը և ամբողջացնել տեքստային կառույցը:

Որոշ հրապարակումներում, քանի որ խնդիրը չափազանց լուրջ է, և հեղինակն ինքն էլ պատասխան չունի, հեղինակ-ներքին հասցեատեր երկխոսությունը չի շարունակվում. պատասխանը

ակնկալվում է ստանալ տեքստից դուրս՝ արտաքին հասցեատիրոջից, կամ էլ ձևակերպվում է իբրև հռետորական հարց. «Արդյո՞ք այդ մթնոլորտին չեն նպաստում համատարած աղքատությունը, ...կոռումպացված չինովնիկների կամայական որոշումները, ...անհանդուրժողությունը, միմյանց լսելու, երկխոսելու անկարողությունը...»: Թե՛ հռետորական հարցը և թե՛ տեքստից դուրս պատասխան ստանալու ակնկալիքը ենթադրում են արդեն արտաքին երկխոսության հնարավորություն՝ արտաքին հասցեատիրոջ հետ:

Արտագաղթի թեմային անդրադառնում են բոլոր պարբերականները (իշխանամետ, ընդդիմադիր, չեզոք): Քանի որ հիմնախնդիրը լուրջ է և արդիական, դիրքորոշումները նույնպես հաճախ բևեռացվում են, հասնում ծայրահեղությունների: Խնդիրը նաև քաղաքականացվում է, ակտիվանում են մանիպուլյացիաները, ինչը հանգեցնում է բարոյական որոշ ըմբռնումների արժեզրկման: Համագաղթին մտահոգությունն այս դեպքում վերածվում է կոնկրետ մեղադրանքների, տեքստի ներքին հասցեատիրոջ հարցերը և հեղինակի պատասխանները նույնպես մանիպուլացվում և ուղղորդվում են:

Լրագրող-մեդիատեքստ-հասցեատեր փոխհարաբերությունների համատեքստում մենք ներկայացրինք հեղինակ-ներքին հասցեատեր երկխոսության մի քանի նրբագիծ՝ տեսադաշտում ունենալով թեմատիկ որոշակի շրջանակ՝ արտագաղթը: Ներքին հասցեատիրոջ դերային գործառույթները կարող են դրսևորվել նաև այլ շրջանակներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Стѣи А.Н.Соловьева, К проблеме диалога культур в обществе всеобщей коммуникации, http://www.lihachev.ru/pic/site/files/lihcht/2012_Sbornik/2012_Dokladi/2012_sec6/006_2_012_sec6.pdf «Современный медиатекст», учебное пособие, Омск, 2011, http://jf.spbu.ru/upload/files/file_1367094127_8425.pdf Мария Казак, Специфика современного медиатекста, <http://discourseanalysis.org/ada6/st42.shtml> А.Г. Антонова, Медиатексты в современной массовой коммуникации, Ярославский педагогический вестник, 2011, N2, т.1 (гуманитарные науки), с. 275-278, Стеценко Н.М., О соотношении понятий текст-медиатекст-медиадискурс, Ученые записки Таврического национального университета им. В.И. Вернадского, серия «Филология. Социальные коммуникации», т.24 (63), 2011, N4, часть 2, с. 372-278, М.А. Деминова, Антология современного

медиатекста, <http://journ.igni.urfu.ru/index.php/component/content/article/418> Богуславская В.В., Журналистский текст: лингвосоциокультурное моделирование, <http://www.lib.ua-ru.net/diss/cont/92062.html>

2.М.М. Бахтин, Автор и герой в эстетической деятельности.Проблема автора.

<http://museum.Philosophy.ru./books/>. Տե՛ս նաև Р. Барм, Смерть автора, <http://philology.ru/literature1/barthes-94e.htm>

3. Տե՛ս Кручевская Г.В. Автор в дискурсе печатных СМИ: к проблеме изучения, <http://cyberleninka.ru/article/n/avtor-v-diskurse-pechatnyh-smi-k-probleme-izucheniya>

4.Տե՛ս մասնավորապես Шмелева Т.В. Автор в медиатексте, http://www.novsu.ru/npe/files/um/1588617/portrait/Data/avtor_v_mediatekste.html

5.Տե՛ս Н.В.Соловьева, Е.А.Медведева, Современные медиатексты в аспекте стилиобразующих категорий «автор» и «адресат», «Вестник Челябинского государственного университета», 2012, N 32, Филология. Искусствоведение, вып. 71, с.107-111.

6. Տե՛ս Смеценко Н.М. О соотношении понятий текст-медиатекст-медиадискурс, «Ученые записки Таврического национального университета им. В.И. Вернадского, Серия «Филология. Социальные коммуникации». Том 24 (63), 2011г., N4, часть.2, с. 373-374.

7. Мария Казак, Специфика современного медиатекста, <http://discourseanalysis.org/ada6/st42.shtml>

8. И. М. Дзялошинский, Журналистика соучастия. Как сделать СМИ полезными людям, http://www.dzyalosh.ru/01-comm/books/souchastie/Dzyaloshinsky_book_part1.pdf

9.Մեդիատեքստի հետ հեղինակի և հասցեատիրոջ հարաբերություններին իր ուսումնասիրություններում առանձնակի ուշադրություն է դարձրել Տ.Վ. Շմելյովան։ Նա մասնավորապես տարբերակում է հեղինակի դերային մի շարք գործառնություններ՝ կախված այն բանից, թե վերջինս ժանրային ինչ մատուցմամբ է ներկայացնում իր տեքստը։ Հոդվածագիրը, ելնելով Մ. Բախտինի հանրահայտ տեսությունից, բազմաձայնություն (պոլիֆոնիա) է նկատում տեքստում՝ եզրակացնելով, որ «բազմաձայնությունը գործնականում ժամանակակից մեդիատեքստի պարտադիր հատկանիշն է»։ Այս կարևոր իրողությունը նկատելով հանդերձ, ռուս հետազոտողն իր

վերլուծությունները կառուցում է հիմնականում հեղինակային սկզբի մի շարք հատկանիշների վրա՝ անտեսելով ներքին հասցեատիրոջը: Տե՛ս Шмелева Т.В. Автор в медиатеке, http://www.novsu.ru/npe/files/um/1588617/portrait/Data/avtor_v_mmediatekste.htm, տե՛ս նաև՝ Т. А. Каминская, Автор и адресат в современных медиатеках, <http://jf.spbu.ru/about/428/549.html>

10. Անի Սահակյան, Մեր իշխանությունը, կամ ՌԴ մեկնող ավտոբուսները հարմարավետ են, yerkir.am

11. «Արտագաղթի իրական պատկերը...», 168.am

12. Նույն տեղում:

13. «Մեր արտագաղթի իրական բովանդակությունը», armwold.am

14. Արամ Փախչանյան, Փախուստ կամ զանգվածային արտագաղթի պատճառները, <http://www.mediamax.am/am/column/12480/>

15. Աննա Մուրադյան, «Սևով» միգրացիա, hetq.am

16. Տե՛ս, օրինակ, Անի Մկրտչյան, Ինչ են հայերը հոգեբանորեն փնտրում արտագաղթելով և ինչ են գտնում, <http://www.Asparez.am>, տե՛ս նաև՝ Գ. Ղարիբյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Մարդկային կապիտալի կորուստների խնդիրները և արտագաղթը կանխելու ուղիները Հայաստանում, Azg.am

17. Նույն Արևշատյան, «Ոնց կարելի է այդպես հեշտությամբ խոսել արտագաղթի մասին». Քաղաքագետ, <http://www.aravot.am>

18. Տե՛ս, օրինակ, «Տեղի է ունենում ոչ միայն արտագաղթ, այլև մնացողների աղքատացում», <http://civilnet.am/2013/10/16/inter-view-avetik-chalabyan/>, «Ինչու են արտագաղթում Հայաստանից», «Դե ֆակտո» ամսագրի գրուցակիցն է ՀՀ միգրացիոն պետական ծառայության պետ Գագիկ Եգանյանը, <http://norlur.am/p=36149> և այլն:

19. «Արտագաղթ», hrarak.am

20. Մասնավորապես՝ նման կերպարի ուշագրավ բացահայտումներ կարելի է անել նաև տպագիր և առցանց մամուլում հայտնվող բանավեճերում, որտեղ հոգեբանական հնարքների առկայությունը, վեճի մասնակիցների փաստարկումները ինքնատրոհման լայն հնարավորություններ են ընձեռում հեղինակին: Կամ՝ հետաքրքիր կլինի ուսումնասիրել նույն լրագրողի մի շարք հրապարակումները, որոնք ի հայտ կբերեն նրա ստեղծագործական ներքին դիմակների բացահայտման ընթացքը: Սրանք թերևս առանձին ուսումնասիրության նյութ են:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԼՐԱԳՐՈՂ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՍՑԵԱՏԵՐՈՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԻԱՏԵԽՏԵՐՈՒՄ

ԴԱԿԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լրագրող-հասցեատեր փոխհարաբերություններում ներքին հասցեատիրոջ ներկայությունը սովորաբար անտեսվում է հետազոտողների կողմից: Հատկապես վերլուծական-հրապարակախոսական նյութերում հեղինակի երկխոսությունը ներքին հասցեատիրոջ հետ ուշագրավ նրբերանգներ է հաղորդում տեքստին: Ներքին հասցեատիրոջ միջոցով հեղինակը հնարավորություն է ստանում տրոհելու իր հոգեմտավոր աշխարհը, բազմաձայնություն մտցնելու իր գաղափարների և մտահղացումների մատուցման մեջ:

Ներքին հասցեատիրոջը կարելի է համարել լսարանի մանրակերտը, քանի որ նրա շնորհիվ տեքստը դառնում է հեղինակ-լրագրողի և հեղինակ-լսարանի յուրօրինակ հանդիպավայր և դրանով իսկ նախապատրաստում հեղինակի հանդիպումը արտաքին հասցեատիրոջ կամ արտաքին լսարանի հետ:

РЕЗЮМЕ

ЖУРНАЛИСТ И ВНУТРЕННИЙ АДРЕСАТ В МЕДИАТЕКСТАХ

ДАВИД ПЕТРОСЯН

Ключевые слова: медиатекст, автор-журналист, внешний адресат, внутренний адресат, ролевые поведения, реальный образ, диалогические отношения, внутренний диалог, эмиграция.

Во взаимоотношениях журналист-адресат присутствие внутреннего адресата обычно игнорируется исследователями. Особенно в аналитически-публицистических материалах диалог автора с внутренним адресатом придает тексту примечательные нюансы. Посредством внутреннего адресата автор получает возможность расщеплять свой интеллектуально-духовный мир, ввести полифоничность в процесс подачи собственных идей и замыслов.

Внутреннего адресата можно считать микрообразом аудитории. Ведь благодаря ему текст внутри себя становится своеобразным местом встречи автора-журналиста и автора-аудитории и тем самым готовит встречу автора с внешним адресатом или с внешней аудиторией.

SUMMARY
JOURNALIST AND INNER ADDRESSEE
IN ARMENIAN MEDIA-TEXTS

DAVID PETROSYAN

Key words: media-texts, journalist and author, external recipients, the recipients, role behavior, real image, dialogical relations, internal dialogue, emigration.

In the journalist- addressee relationships the presence of inner recipient is usually ignored by the researchers. Especially in analytical-oratorical topics the author's dialogue with inner recipient transmits remarkable shade to the text. Through the inner recipient the author gets an opportunity to split his spiritual-intellectual world as well as to introduce polyphony in the presentation of his concepts and ideas. The inner recipient may be considered as tiny-shaper of the auditory, because thanks to him the text becomes a unique meeting place between the author-journalist and author- audience and thus preparing the author's meeting with the external recipient or with outer auditory.